

Ս. ԷջՄԻԱՆՆԻ ԳՐՈԴՈՐԱՆ.

Զեռագիր № 875 Հոգեաց գերի է, որ թարգմանել է Ատեփաննոս Խլովացի վարդապետը լաւտին լեզուից։ Գրիշն է Յովհաննէս կրօնաւորը 1671 թուականին Շօշ (Սպահան) քաղաքում, երջանկայիշատակ Յակոբ կաթողիկոսի ժամանակ։

« Փառք մատուցի ի բնաւից՝ տուղին շնորհաց և իմաստից։ Որ զօրացնց զնպաստ տառիցս, Ստեփաննոս՝ սիրող տառից։ »

« Արդ՝ գրեցաւ այս ի քաղաքն Շօշ ընդ հովանեաւ Ամենափրկչի վանից, ձեռամբ Յոհան մեղսամած անուամբ և եթ կրօնաւորի, ի խնդրս Մեսրովս Աստուածաբան վարդապետի, ի թիւն ՌՃՆ ամի, ի յամնեանն նոյեմբեր երրորդի։ Ո՞վ ընթերցողք սորա՝ հարք իմ և եղբարք, անմեղադիր լիրովք, զի կար մեր այս էր, և մով տէր ողորմիայիւ յիշեսջիք զմեղաւորս խընդրեմ թախանձանօք և աղերսանօք, և գուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուեց մերս՝ ի յաւուրն յետին, որ է օրչնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Հայր մեր, որ յերկինս ես, Զայնմանէ շնորհողին, որ շնորհէ առ ինդրողն իւր լիալիր ճոխումեամբ, զոր հոչակէ առաքեալն ասելով ումեմն ետ թարգմանութիւն՝ այլում մարգարէութիւն, միւսոյն հաւատ և այլն։ Յայսմ տարազի յորում կամիմ վիպասանել՝ այրս այս Ստեփաննոս շնորհալի վարդապետս, որ էր ի յերկրէն նլախաց և նլով քաղաքէ, վարժեալ ի լատին լեզուն և ի վարժարանս նոցա, և եկեալ յԱրարատեան երկիր Վաղարշապատ ի սուրբ Աթոռոն Էջմիածին առ ոտս վարդապետաց և սրբոց հայրապետաց, կացեալ ամս բազումն՝ ուսեալ զամենայն մերային լեզուս, հմտացեալ հին և նոր Կտակարանաց և զարտաքնոց և աստուածաբառանական գիրս զամենայն մերկապարանոց առաջի իւր տեսանէր։ Եւ բուռն էառ զանձնաօթ գրեանս Լատինացւոց ի մեր լեզուս թարգմանել։ Բայց յայնմ ժամանակի, որ էր թիւն ՌՃՆ, ի հայրապետութեան Աղուանից Տէր Պետրոս կաթողիկոսին, ես սին Վլաս վարդապետս՝ հանդերձ վերոդրեալ հայրապետաւս գնացաք ի սուրբ Աթոռոն Էջմիածին ի տեսութիւն Յակոբ կաթուղիկոսին, որ բազում ամօք գնացեալ էր ի տունս Բուռնաց սակի՝ գեղերեալ կայսր առ դրունս բռնաւորաց ի Կոստանդնուպօլիս և յԵրուսաղէմ, որ Դարձ անդրէն՝ եկն ի սուրբ Էջմիածին։ Խակ Աղուանից եպիսկոպոսունքս ի տեսութիւն և երկրպագութիւն նշման տեղւոյն, և ողջունել զեղբարս՝ անդ ժամանեցաք, զորս ի եղբարց տեսաք ի սուրբ Գրոց պարապմանցն դեգերեալ յորս մի էր Ստեփաննոս վարդապետան ի թարգմանութիւն դրոց սրբոց, զորս ի ձեռին ուներ հրեշտակաց՝ հոգեաց՝ ընազանցականաց՝ և մեթափիղիքային, զի վարկապարազիս էաք իմն ծանօթի նղեալ իրը մատամբ ծայրի ճաշակեալ։ Քանզի յօյժ սրտառու, տենչմամբ՝ արարի զիմն ինդիր քանզի ոչ եղեւ ձեռնտու՝ քանզի նոր թարգմանեալքն ոչ էր փոխեալ երկրորդիւ

և ի ձեռն քարտուղարաց և նօտարաց՝ խոստացաւ ի դիպոջ ժամու առաքել մեզ. Բայց մեր անդրէն դառնալն յԱղուանս եղեւ փոխումն սրբազն հայրապետին մերդյ 8էր Պետրոսի, սակա այսը ոչ սակաւ խոռովութիւն և շփոթմունս եղբարց եղեւ՝ բազում ամն վասն կաթուղիկոսութեանս ոչ եղեւ ձեռնհաս մեր գրեանց. մինչեւ ամս 18, զի Յակոբն փոխեցաւ, նստաւ յԱթոռ Եղիազար այրն փառաւոր և իշխանազօր, և յետ նորա Նահապետ ի Ռաձնի. Ես անարժան Վլաս վարդապետս հանդերձ Սիմէօն Կաթուղիկոսով գնացաք Էջմիածին՝ վասն Բ պատճառի, Նախ՝ վասն վախճանեալ կաթուղիկոսական միաթարութեան, Երկրորդ՝ նորընծայ Նահապետ կաթուղիկոսն շնորհաւորութեան ողջունի. Ոչ սակաւ սէրս եցոյց մեզ, բազում աւուրս կացաք անդ՝ և անտի ընդ մեզ եղեալ վարդապետքն յուղեւորութիւնս ելեալ վանօրայս մինչ ի մեծափառ աթոռս Բջնի չուեցաք՝ առ սիրելի Եղբայրս մեր արհի Եպիսկոպոսն Մեսրովք վարդապետն, զոր նորա եկեալ էր ի Ծօշպոլսէ ի նուկրակութենէն և ի քարոզութենէն, զի բազում ծախ անօմից և ընծայիցն բերեալ ընդ իւր՝ և զգրեանս բազումս, զորս պատահեցաք՝ առ ցանկալեացն մեր զոր վաղեմի ունէի զփափագն և զիշեն ներ սրտիս վասն գրերոցս այս. Զորս սա ևս սիրով ստացեալ ունէր փափագմամբ. բայց զիմ փափաքս յալթեաց նորայն՝ վասնորոյ՝ թոյլ ետ, ընծայեաց մեզ և մեք ըստ ծախուն տոկոսիս ընծայեցտք. առեալ բերաք ի մեր Երկիրս Ծրուան զոր ոչ է այսպէս գիր ի մերս աշխարհ. բայց վասն այն սակաւ յիշեցաք՝ զոր և դուք որդիք Սիօվնի յորս ցանկայք վարժել գրերոյս յիշեցէք զբազմամող Վլաս վարդապետս՝ հանդերձ ծնողովքս և հարազատ Ելլարբքս.

№ 1381 Զեռագիրը Գործք Առաքելոցի մեկնութիւն է, նօտրագիր: Արտագրողն է Զտքարիա Սարդաւագ Քանաքեռոցի սռուրք Յովհաննու վանքում Այրարատի, Յակոբ Կաթուղիկոսի ժամանակ 1674 թ,

• • • • • Որոյ ամենակարող զօրութեամբն եղեւ զրաւ և աւարտումն զրոցս, որ կոչի Եղիշէ պատմագիր. յԵրկիրս Արարատեան ի գաւառս Կարբայ, յոտն Արագածու՝ հանդէպ Արայու ի հոչչակաւոր և գերափառ աստուածաբնակ քաւարանիս ի սուրբ մենաստանս ի սիւղի վանաց, որ ստուգաբանեալ կոչի Յօհաննու վանք, որ ի վերայ Քասաղ գետոյ, որ էր յարկ կայսանի իշխանացն Ամատոննեաց և աթոռ. Մամիկոնէից: Ընդ հովանեաւ մեծի ամլորդւոյն և յառաջլնթաց Կարապետին Յովհաննու և Մատթէոսի աւետարանչին և սուրբ Լուսաւորչին և սուրբ Ճգնաւորացն Պարսամայ և Երեմիա և Դամբարանաց մեծ իշխանին Վաշէի շինողի սուրբ Կաթուղիկէին ի թուաբերութեան Հայկազնեան տոհմի Ռ. Երորդի Ճ. Երորդի և Գ. Երորդի Սեպաւեմբեր ամսոյ ի մուտք: Ի թագաւորութեան Պարսից Հայ Սուլէյմանի. և յամիրայութեան տանս Արարատեան Սաֆիղանի Երկրորդի: Եւ ի Կաթողիկոսութեան սուրբ Աթոռոյն Էջմիածնի

Տեսուն Յակոբայ, և առաջնորդութեան սուրբ և Հրաշակերտ մնասասնիս հեղահոգի և սրբազն մեծի բարունապետին Յոհանիսի Կարբեցւոյ, յորում ժամանակի ներփակ և վշտանամբ յայլասեռ և եղեռնագործ ազգացն Պարսից. վասն զի այս և. և ամ է զի հաշտութիւն է ի մէջ երկուց մեծամեծ թագաւորացն՝ Պարսից և Յակաց, վասն այնորիկ բազմացեալ և յոռացեալ և ազգն Պարսից ուստեղ և ըմբելց պարապեալ, վասն որյ միշտ կեղեցեն և կեղեն ողորմելի կեանս քրիստոնէից, նաև և տասն են իշխանք իւրեանց զի ըստ կամաց նոցա շարժի. քանզի առաջին Սաֆիղանն, որ նստէր իշխան յԵրեան լակղի ազգաւ, թշնամացաւ ընդ մեծ հայրապետին Յակոբայ, որ կամէր գնալ յԱսպահան վասն գործոյ իւրոյ. իսկ իշխանն երկեաւ մի գուցէ գանգատեսոցէ յինքեան, այլ դարձոյց զնա յԱստապատ գեղջէ և արար զնա դիպահոց, և ժամ գտեալ նորա փախեաւ և գնացեալ գանգատեաց Շահին, և այլ և բազումք գանգատեալ էին ինմանէ, զայս ամենայն լուեալ Շահն, առաքետց և ըմբռնեաց զնա և կողոպտեաց զինչոն և զինքն շղթայիւք կալանս արար, և այլ ոմն փոխանակ նորա առաքեաց իշխել Երեան Սաֆիղան անուն՝ ազգաւ Աիր. Սա տմարդութիւն ցուցեալ, և ո՛չ ոք երկնչէր ի սմանէ, այլ ամենեքեան ըստ իւրեանց կամացն կային, և բազմացան գողք և աւազակք և ո՛չ ոք կարէր գնալ ճանապարհ զի կողոպտէին. եթէ ոք գանգատէր նմա. և նա ո՛չ առնէր դատաստան, և այսպէս կայաք ամենեքեան յերկիւրի և ի սասանման, բազմացցց և հարկապահանջութիւն ի վերայ ամենայն ուժնք. Եւ մեք վայ և ալղաղաղակ հարդամք՝ ակն ունելով ողորմութեան Աստուծոյ. Եւ այս դառն ժամանակիս գրեցաւ սա ձեռամք ամենաթշուառ և վատահամբաւ Զաքարիայ սարկաւագի Քանաքեռցւոյ՝ ի դրան սուրբ Կարապետիս և ո՛չ մի ժամ համցյ եղեալ Աստուծոյ, այլ զկամն իմ պաշտելով և զսիրտս եղբարցն խոցոտելով, վայ եղեցւոյ. Յակայն ով ոք հանդիպիք սմա, յիշեցէք յաղօթու ձեր զառացնորդ վանացս զՅովհաննէս բարունապետն, և այլ միաբանք ուկտիսի.

Երեանի խաներն իբրև մերձաւոր իշխաններ մեծ ազգեցու. թիւն ունէին սուրբ Աթոռի, և հայրապետաց վերայ, որոնք յաճախ նրանցից աւելի, քան Նահերից նեղութիւններ էին կրում: Խաներն էլ մի տեսակ ինքնիշխան կառավարիչներ էին: Յակոբ կաթողիկոսի ժամանակ Երեանի խան էր նշանակած ոմն Սահի ազգաւ լէկղի, որ շատ ագահ և բռնաւոր անձաւորութիւն էր: Յակոբ կաթողիկոսը կամենում էր երթալ Շահի դուռը զանազան խնդիրների համար, բայց Խանը երկիւղ կրելով, որ իւր վերայ գանգատի է զնում: ճանապարհին բռնել տուեց և կաթողիկոսին դարձնելով Երեան բանտարկեց. բայց կաթողիկոսը կարողացաւ ծածուկ փախչել և գնալով Սպահան, գանգատեց Սաֆի խանի բռնութեան և Արարատեան երկիրը կողոպտելու մասին: Շահը համակրութեամբ ընդունեց հայրապետին, հրամայեց լէկղի Սա-

ֆի խանին պաշտօնանկ անել և բանտարկել ու նորա տեղ նշանակեցաւ ժամանակաւոր կառավարիչ Արարատեան նահանգի՝ ոմն Սարուխան քէկ և ապա երկրորդն Սափի ղուլի խան։ Սա մի պորտաբոյծ, շահամոլ, կաշառակեր անձն էր, որոյ ժամանակ ազատութիւն էր աւազակների ու գողերի, որոնք իրանց յափշտակածները բաժանելով խանի հետ, միշտ համարձակ գործում էին իրանց չարութիւնքը։ Առհասարակ Նահ-Արա երկրորդի մահից յետոյ Պարսկաստանի ներքին վարչութիւնը Նահ Սուլէյմանի և մանաւանդ Նահ Հիւսէյնի ժամանակ թոյլ էր, որովհետև շահերն իրանք անձնատուր էին աւելի անձնական բաւականութեանց և կառավարութեան ղեկն աւելի նըրանց շրջապատողների ու խաների ձեռքին էր։ Ահա այս հանգամանքների վերայ է ակնարկում յիշատակարանն ասելով, «Նաեւ տասն են իշխանք իւրեանց, զի ըստ կամաց նոցա շարժի»։

Զեռագիր № 2105 է Քարոզագիրք Ցաթեացւոյն մեծադիր բոլորագիր։ Գրիշն է Վառվառիա կոյս 1684 թ. Սարա երկրում Փոքր Սիւնեաց ի վանս կուսանաց, ընդ հովանեաւ Թաղէի ռաքելոյն։

Ահա՝ ընդարձակ յիշատակարանի պատմական մասը.

«Որև տենչմամբ սրտիւ և ըղձափափագ տոշորմամբ ետ գծագրել հեղահոգի և բարեփառ քահանայապետն տէր Պետրոս վարդապետն որդի գոլով ազատաց յազգէն մեծի իշխանացն Գրիգորի և Հասանայ, Դօքեանց կոչեցելոյ։ Յաղագս յիշատակի հոգւոյ իւրոյ և եղբօրն հարազատի Ցեառն Գրիգորի եպիսկոպոսի, ի հայրապետութեան Հայոց Եղիշազարու դիտապետի լուսակառոյց գահոյին սուրբ Էջմիածնի, և ի կողմանս Աղուանից Ցեարցն Երեմիայի և Սիմէօնի կաթողիկոսացն։ Եւ յառաջնորդութեան գերահոչակ Աթոռոյն Թաղէի վանից Ցեառն Պետրոսի արիաջան և քաջ հովուապետի, և ի մելիքութեան առյն նահանգի պարոն Միրզախան քէկին։ Եւ ի թագաւորութեան Պարսկաց Նահ Սուլէյմանին. ի թուփս Հայոց Ռձլդին. ի դառն և անբարի ժամանակիս, յորում նեղինք յանօրէն բոնաւորաց Տանր Հարկապահանջութեանց մեծապէս տաժանմամբ մինչ ի յելս շնչոյ անզերծանելի գրաւորմամբ։ Եւ այն վատն բազում մեղաց մերոց. զի աշխարհ ամենայն ի վրդովման և ի տատանման կան։

Ընդ որն և մեք կամք ըստ ծփանաց համայնից ալէկոծութեանց վարեալ ի մրրկէ անտի խռովովութեանց, զի ոչ հայրապետք և ոչ առաջնորդք և ոչ կրօնաւորք. ոչ լինեն երբէք յանդորրութեան և հանդարտութեան սակա զարտուղի գնացիցն և անըմպոն ընթացիցն, զոր ունին հաստատեալ յինքեանս. վասնորոյ տուժեն դիմսսական հարկօք առաւելութեամբ և ոչ որպէս սահմանեալ և կարգեալ ի յօրէնսդրաց և առաջնորդաց իւրեանց, այլ երկիծուցանելով սաստկապէս կեղեքեն զկեանս անխայապէս, ըստ օրինի չար տզրկաց անկուշտ և անյագ լինելով. Յորոց փրկեսցէ Տէր մեր Յիսուս Քրիստոս զամենայն հաւատացեալս», Յիշեցէք և լի:

Զեռագիր № 1671. Է պատմութիւն Միքայէլի Ասորւոց պատրիարքի, մեծագիր բոլորագիր, գրած է թղթի վերայ 1687 թ.: Գրիշն է Մկրտում Ձուղայեցի, Եղիաղար կաթողիկոսի ժամանակ: Ունի ընդարձակ յիշատակարան, որոյ մէջ կան հետևեալ պատմական տեղեկութիւնք:

« Արդ շնորհիւ Ցեառն սկսաք և ողորմութեամբն նորին յանկ ելեալ աւարտեցաք ի թուահաշութեան հայազուն սեռի Ռձլջ, Հոկտեմբերի Գ. Եղե սկիզբն գծութեան սորին. ի հայրապետութեան Ցեառն Եղիաղարու երիցս երանեալ աստուտծապարգե կաթողիկոսի ամենայն Հայազնի, որ և ընդ ամենայն բարերարութեանն որ առ ազգն Հայոց արար բազում շէնս ի սուրբ Յակոբ յԵրուսաղէմ և ի սուրբ Էջմիածին, որ և արդ կայ ի նոյն գործս շինուց պայծառութեան յաթոռոյ սրբոյ: Եւ թագաւորութեանն Հագարացւոց յարևմտեան գնդի Կոստանդնուպօլիսի սուլթան Մահմատի, որ և բազում անգամ ի պատերազմի պարտեցաւ ի զօրուն ֆուանկաց, մնալով փոքր մասի գնդաւ. մինչեւ ձանձրացեալ նախարարացն և ամենայն զօրութեանց. ժողովեցան ի մի խորհուրդ՝ գրոհ տուեալ դիմեցին ի վերայ, ընկեցին ղնա յաթոռոյն թագաւորութեան, և նոյն ժաման թագաւորեցուցին զեղբայր նորին զՄուլէյման կոչեցեալ Հոկտեմբերի ամսոյ ի Իթ. յաւառը տօնի Բարաղամու Անտիքայ Եպիսկոպոսի յետ ծէ աւուր, ապա ածաւ ընդ մէջ իւր զսուսեր թագաւորութեան թագիւ պսակեալ և հազիւ խաղաղացաւ վրդովմունք աշխարհի: Եւ արդ Եղե աւարտումն գրոյս պատմու-

թեան ի թուականիս հայոց ՌՃԼէ Յունվարի ժԴ. ձեռամբ Մը-
կըրտում և եթ մեղօք վիրաւորի և անարժանի Զուղայեցւոյ ի
Թոխաթ քաղաքի. որ Թաղթիդալայ կոչեցեալ յեկեղեցին սրբոյն
Սարգսի առ ոտն տեառն իմոյ Մինաս վարդապետի, որ ստացաւ
զգիրքս պատմութեան ի վայելումն անձին իւրոյ և ի յիշատակ
հսկուոյ իւրոյ և ամենայն երախտաւորացն, զոր Տէր Աստուած
տացէ վայելել ընդ երկայն աւուրս և յետ աստեացս ելանելոյն
ի մարմնոյն մնալ ի յիշատակ անջինջ ի գուռն սրբոյ Ամուսոյս
էջմիածիի :

Յիշատակարանի մէջ յիշված Սուլթան Մեհմէտը Իբրահիմի
յաջորդ Մեհմէտ Չորրորդն է, որ թագաւորեց 1648ից մին-
չե 1687։ Սորա թագաւորութիւնը բաւական խաղաղ անցաւ
բայց վերջին տարիներն եղան պատերազմներ Գերմանիայի դէմ
և այն անյաջող, մինչդեռ ինքը Սուլթանը փախանակ զօրքերին
առաջնորդելու անձնատուր էր զուարճութեանց և մանաւանդ
որսի, որ իւր ամենասիրելի պարապմունքն էր. ուստի և մինչեւ
իսկ աւանդութիւն էր տարածված ժողովրդի մէջ, թէ հայրը
նրան անիծելով ասած է եղել, որ նա միշտ թափուական լինի
սարերում և ձորերում։ Պատերազմների անյաջողութիւնքն
առիթ տուին դժգոհութեան այս սուլթանի դէմ և զօրքը
ապստամբեցաւ։ Ապստամբները գահընկէց արին Մեհմէտ Չոր-
րորդին, բանտարկեցին, ուր և մեռաւ մի քանի տարիից յետ
և թագաւորեցրին նորա եղբօր Սուլէյմանին, որ երկրորդ Սու-
լէյման կոչեցաւ։

№ 1134 ձեռագիրը մեկնութիւն քաղուածոց առակաց Ժո-
ղովովի, իմաստութեան գրոցն Սողոմոնի, բոլորագիր։ Գրիչն է
Միքայէլ ոմն 1687 թ.

« Ընորհիւ Տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանդ հանեալ աւար-
տեցի զսորը գիրս՝ ի յաւանն նոր քաղաք կոչեալ ընդ հովանեաւ սուրբ
Նշանի եկեղեցւոյս՝ զնուաստոգի Միքայէլ Բարդամ գրչի որդի. առ ոտս՝
տեառնս իմոյ Մինասայ քաջ րաբունապետի ստացողի սուրբ տառիս արչի ե-
պիսկոպոսի Եւգոնիակերտի. Ի ժամանակս թագաւորութեան տաճկաց սուլտան
Մահմէտի, յորոյ վերայ էր պատերազմի քրիստոնէիցն արևմտից, յորոց կա-
րի նեղեալ և իբր ի ստրկութիւն իմն չքաւորութեան անկեալ և հարկապա-

Հանջութիւնս յոլովս ի վերայ աշխարհի իւրոյ յարուցանէր՝ ինդրելով ի մեծամեծաց իւրոց դանձս բազումն անուն իմն եղեալ է. քեպուռ աղջասի, և յետոյ իշմիրայ անուամբ հարկ իմն եղեալ ծանր ի վերայ ամենայն ումեք հնազանդելոցն, որ և ի վաղ ժամանակի երրէք եղեալ է, թող զայնքն, որ յառաջմէ սահման իմն են հաստատեալ ի վերայ քաղաքաց և գաւառաց հարկ ի գանձս արքունի տալ, յորոց պաշանչմանէ հարկացս ձանձրացեալ ամենայն ոք և ի գուռն չքաւորութեան հասեալ և ոմանք զլխովին իսկ անկեալ յալդքատութիւն և ի բնակութեանց իւրեանց փախուցեալ ի տար աշխարհս՝ տառապելով և անյոյս լինելով յապրուստ. և ելս իրացն և խաղուղութիւն աշխարհի յԱստուծոյ հայցէին, միայն զնա ունելով յօյս փրկութեան բազում նեղութեանց իւրեանց, Այլ և աշխարհ ամենայն դատարկաց ի զօրաց արքունականաց հաւատարմաց, և բազմացան բյլք աշխարհաւը զօրաց կողոպտողաց, որ շրջեալ և իջնվանեալ ի գեղօրայսն՝ ազգի ազգի պատճառանօք ինդրէին դրամն, և առաւել ևս ազգն թուրքմանաց Խորանաշըլջաց, որոց չարութեանցն ոչ տեսեալ գիւղօրայքն՝ աւերեցան բազում գեղլք և ամսյացաւ երկիր նոցա ի բնակչաց աւուրբք յառաջ. Եւ առաւել ևս յայսմ ամի զօրացան այս ազգքս թուրքմանաց, և աւար հարին զանասունս գիւղօրէից ամհնայն երկրի և ի տեղիս տեղիս զբնաւին ինչք գիւղից յաւար հարին, որպէս և Զաղք կոչեալ գեօղն թալանեցին ի դաւան Սերբաստից՝ ուր վանքն իսկ է Հրեշտակապետ կոչեցեալ, և դադարեցան ճանապարհորդք և կարավանք՝ և ամսյացան ճանապարհք ամենայն, զի զբաղումն կողոպտեցին ի վաճառականաց և սպանին. Օրինակ քեզ՝ ասցելոցս և չափ վրդովմանն, զի մերձեալ եմի գրելց գրոց Յուլիսի ֆԱ. և օգոստոսի ԻԴ. ապա կարացի հասուցանել յԵւրոպիա ի Ճեռն վարդապետիս իմայ, որ էր ի սուրբ Պարսամայ եկեղեցին. Թէպէտ և յոյժ շտապէի հասուցանել ի նա, զի և տէրն իմ իսկ փութայր յոյժ ստիպեալ ի սիրոյ գրոց, սակայն ոչ կարէաք առ միմեանս հասանել յԵրկիւղէն թուրք մանաց գողոց, և էր յԵւաւորութիւն մրջոցի ճանապարհի մերում ժամու Գ.Ֆ. անի, հետեւագնացի, զի և ի կոյրս և ի մուրացիկս ոչ խնայեալ մերկացուցանէին, յորս բանիցս զառաւելութիւն չարութեան իմասցիս. Եւ գեղլք առ զմիմեամբք եկեալ ի մի գեօղ ժողովէին և ոմանք փախուցեալ՝ ի քաղաք անկանէին, որ և ի ժամանակի հնձոց՝ ոչ կարացին համարձակ գնալ ի գեօղս իւրեանց ի հունձ և ի մանգաղ, զի նորա կերակուր իւրեանց արարին զարտօրսյսն՝ հասկակոտոր տոնելով և արածելով զանասունս իւրեանց. Յաւելեալ և այս նեղութիւն ի վերայ հարկացն թագաւորականաց և աւերմանցն գիւղից, յորոց պատճառէ եղեւ սղութիւն ցորենոյ և թանկութիւն հացի, այլ և աւերման պատճառ. Եւ աւելի իմն ևս այս որ Դ. ըստակն ի մին մառչիլ եղեւ, և աղքատք և մշակք և արուեստաւորք, որք աւուրբ սակով գործէին, յոյժ նեղեալ լինէին, զի զդրամն որ ինքնանք յումքէ առնուին, միւսն ի նոցանէ ոչ առնոյր՝ թէ կերակրավաճառք և թէ այլք, որ և յոյժ վշտացեալ լինէին և այլ զինչ երկարեցից Զեղ ի ճանձրութիւն. Որ և խնդրեմք ի Տեսանէ՝ ապա անդորրութիւն և խաղաղութիւն ամենայն երկրի՝ աղաչանօք ամենայն սրբոց.

№ 1388 ձեռագիր Կաթուղիկեսյց թղթոց մեկնութիւն է ի Սարգու Շնորհալւոյ, բոլորագիր, պատկերազարդ, ընտիր գըր-չութեամբ։ Գրիշն է Մկրտում Զուղայեցի, Եղիազար կաթողիկոսի և Օսմանցւոց Մահմէտ սուլթանի ժամանակ 1687 թ.

« Արդ՝ յիշելով զանցաւոր և զանկայոն զփառու աշխարհիս, և փափա-գելով անանց և մշտնջենաւոր կենացն յաւիտենականաց՝ մեծ բարունի և աստուածարան Մինաս վարդապետն Յամմեցի. վասն այն ստացաւ զուրբ գիրս Կաթուղիկեսյց եօթից թղթոցն, զոր սուրբ վարդապետն Հայոց Սար-գիս՝ մեկնեալ է զսա քաղցր և ախորժ բանիւք, ոչ նրբադշն շաւզք, և ոչ ըստ գեղջուկ բառիւ՝ կամ բայիւ, այլ արքունական միջնաշաւիդ գնացիւք, քաղցրաբարբառ պատմաբանութեամբ, զոր ետ գրել զուրբ գիրըս Մինաս վարդապետն Յամմեցի յիշատակ հոգւյ իւրում և հոգեւոր ուսուցչի իւրն՝ աէր Մարկոսի վարդապետի Ըենգուշեցւոյ վախճանելոյ յառաջ քան զայս եօթն ամաւ, նա և մարմնաւոր ծնողացն իւրոց հօրն մահտեսի Առաքելի և յօրն Հոփիկսիմեի և մեծ մօրն՝ մահտեսի Պահրէի, և առհասարակ երախ-տաւորացն իւրոց, և ամենայն արեանաւու զարմից և ազգայնոցն իւրոց։

Արդ՝ գրեցաւ սուրբ գիրըս եօթից գլուց մեկնութեան Կաթուղիկեսյց ի թուահաշուութեանս Հայազուն սեռի նուն և Զ. ամին ի Յունվար ամսոյ Ճ. Ձեռամբ յեանեալ Մկրտումի՝ մեղքը վիրաւորի և անարժանի Ֆուկայեցոյ ի քաղաքս Յեգուկիայ Թողաթ կոչեցելոյ, ի յեկեղեցիս սուրբ Սարգ-սի Թափիթիղալայ. Ի Հայրապետութեան վեհափառ և լուսազարդ սուրբ աթոռոցն Էջմիածնի, Հանգարտախաղաց ծովուն Հաստահեղոյս և անառիկ պարսպին, աստուածամեծար և երանաշնորհ սրբազն կաթուղիկոսի Ցեան Եղիազարու Հռոմէկայցոյ՝ Հինգերոդ ամի Հայրապետութեան։ Եւ թա-գաւորութեան Հագարացոց՝ Հռոմաց տանոյ սուլտան Մահամատի ի դառն և վշտաշտ տիրալի և անբարի ժամանակիս, զոր հինգ ամաւ յառաջ մին-չեց ցայս վայր՝ կան ի մէջ մեծ ևս անհնարին պատերազմաց ընդ քրիստո-նէից ազգին ֆռանկաց, որ և լինին բազում կոտորումն զօրաց, անկումն մեծամեծաց, առումն քաղաքաց, աւերումն աւանաց, աւարառումն տանց և ընչից, գերեզմանումն կանանց և տղայոց, քայլքայումն ազգաց, աւե-րումն քակտումն և խանգարումն հեկեղեցեաց և սուրբ տեղեաց բազմաց և այլս սոյնպիսին յոլովս, որ կ տարի իմն սգոյ և արտասուաց են արժանաւոր. Զոր և հայցեգք, զի բաղմագումն Աստուած Համոզեալ վարեսցի ի Խաղա-ղութիւն, վասն զի քաղաքք ամենայն, աւանք, գաւառք՝ և գիւղօրայք՝ որք ընդ իշխանութեամբ Հագարացոց են՝ կան ի մէջ դառն վշտաց, ի հոլո-վումն զօրաց պատերազմանց, կոփումն տանց, և բռամբ քարշումն մեծա-մեծաց և տղայոց, Մանաւանդ քրիստոնէիցս՝ որք կան ի մէջ չարաշար պա-հանջողաց, որ անպատմելի է և անընդ գրով արկանելի, զոր և հեշտալուրն Աստուած գթացեալ ազատեցէ ի ձեռաց նոցա զազգս քրիստոնէից ամեն։

ՄԵՀԵՄՏ ՀՈՐԻՌԴԻՑ յետ՝ թագաւորեցին Սիւլէյման Դ, և
ԱՀՄԵՏ Բ. սոցա ժամանակ արտաքին պատերազմները Գերմա-
նացւոց և Վենետիկեցւոց դէմ շարունակվելով, գրաւեցին Օս-
մանեանց բոլոր ոյժը. թագաւարական գանձարանը շատ նեղ
վիճակի մէջ ընկաւ, այնպէս, որ արքունեաց արծաթեղէնք ան-
գամ հարկ եղաւ հալել դրամ ձուլելու համար. Պարզ է, որ այս-
պիսի ժամանակ կառավարութիւնը ստիպված պիտի լինէր նո-
րանոր հարկեր գնել ժողովրդի վերայ. Բացի սորանից պետու-
թեան ոյժը քաշվելով եւրոպա Գերմանացւոց դէմ, նորա Ասիա-
կան նահանգները անխնամ մնացին և նպաստեցին ապստամ-
բաց և աւազակաց արձակ համարձակ գործելուն. Անզուսպ
յափշտակիչներն էին և թիւրքմէններն, որոնք մեծամեծ չարիք-
ներ հասուցին Փոքր Ասիոյ բնակչաց. Սորա վերայ են ակնար-
կում վերջին երկու յիշատակարանք 1687 և 1688 թուական-
ների.

Մ Ի Լ Տ Ո Ւ

ԵՒ ՆՈՐԱ

ԿՈՐՈՒՅՏ ԴՐԱԽԾԻ.

(Բար Տէնէ)

(Շ-Ք-Ա-Ն-Ե-Ր-Ա-Ն-Ի-Ն-)

Ամէն մի խօսքից լաւ նկատւում է, թէ խօսողն է՝ մի բողոքական
ամուսին, մի հոգեւոր հայր իւր կնոջ. Հետևեալ օրը այց է գալիս հրեշ-
տակը. Ադամը ինդրումէ եւայից, որ ուտեսափ պատրաստութիւն տես-
նէ. նա էլ որպէս պատուական տանտիկին՝ պարծանքով թուում է
իւր բանջարանոցի լիութիւնները և մի քանի րոպէ լաւ մտածում է, թէ
արդեօք մեղանը ինչո՞վ զարդարէ. «Նա անտարակոյս կը խոստովանի, թէ
Աստուած առատաձեռն բարութիւններ է շնորհել երկրին ևս նոյն չափով,
ինչքան և երկնքին » *). Աչա մի հիւրասէր վերէ բարեսիրտ հոգացողու-
թիւններ. Աճապարանք գուրս է գնում հոգսերը դէմքի վերայ նկարուած,
թէ արդեօք ո՞ր ընարութիւնը լաւագցն է, ի՞նչ կարգ պահպանուի, որպէս

*) Զի տեսեալ վկայեսցէ՝ թէ և աստէն իսկ ընդ երկիր
Լցեալ է Աստուծոյ զիւր բարութիւն որպէս յերկինս.